

Նպատակ 10: Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև

Միջազգային հանրությունը մարդկանց աղքատությունից հանելու ուղղությամբ զգալի քայլեր է իրականացրել: Ամենախոցելի պետությունները՝ առավել թույլ զարգացած երկրները, դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրները և զարգացող փոքր կղզի պետությունները, շարունակում են առաջ ընթանալ աղքատության կրճատման ուղղությամբ: Այնուամենայնիվ, անհավասարությունը դեռևս գոյություն ունի, և առկա են զգալի անհամամասնություններ առողջապահության ու կրթության ծառայությունների և այլ ռեսուրսների հասանելիության հարցում:

Բացի դրանից, չնայած եկամտային անհավասարությունը երկրների միջև կրճատվել է, անհավասարությունը երկրների ներսում մեծացել է: Գնալով ավելի տարածվող փոխհամաձայնություն կա առ այն, որ տնտեսական աճը բավարար չէ աղքատության կրճատման համար, եթե այն համապարփակ չէ և չի ներառում կայուն զարգացման երեք չափումները՝ տնտեսական, սոցիալական և բնապահպանական:

Անհավասարությունը կրճատելու համար քաղաքականությունները պետք է լինեն համընդհանուր՝ էական ուշադրություն դարձնելով բնակչության խոցելի և մեկուսացած խմբերի կարիքների վրա:

ԻՆՉՈ՞ՒՄ Ե ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

Մենք չենք կարող հասնել կայուն զարգացման, եթե անտեսենք համաշխարհային բնակչության որևէ հատվածի:

Ո՞րն է նպատակը

Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև:

Ինչո՞ւ

Ամբողջ աշխարհում երկրների ներսում և դրանց միջև շարունակում են գոյություն ունենալ եկամտի, սեռի, տարիքի, անաշխատունակության, սեռական կողմնորոշման, ռասայի, դասի, ազգային պատկանելիության, կրոնի և հնարավորության վրա հիմնված անհավասարությունները: Անհավասարությունը սպառնում է երկարաժամկետ սոցիալական և տնտեսական զարգացմանը, խոչընդոտում աղքատության կրճատմանը և զրոյացնում մարդկանց ինքնաբավարարվածությունն ու ինքնագնահատականը: Սա, իր հերթին, կարող է սնել հանցավորությունը, հիվանդությունը և շրջակա միջավայրի դեգրադացումը:

Ամենակարևորը՝ մենք չենք կարող հասնել կայուն զարգացման և մոլորակը ավելի լավը դարձնել բոլորի համար, եթե մարդիկ մեկուսացած են հնարավորություններից, ծառայություններից և ավելի լավ կյանքի հնարավորությունից:

Որո՞նք են անհավասարության օրինակները

Հինգ տարեկանից ցածր շուրջ 69 մլն երեխա կմահանա հիմնականում կանխարգելիչ հիվանդություններից: Գյուղացի կանանց դեպքում երեք անգամ ավելի մեծ է ծննդաբերության ժամանակ մահանալու հավանականությունը, քան քաղաքային կենտրոններում ապրող կանանց դեպքում: Չարգացող երկրներում բազմաթիվ ընտանիքներ ապրում են այնպիսի հասարակություններում, որտեղ եկամուտն ավելի անհավասարաչափ է բաշխված, քան 1990-ական թվականներին: Սրանք միայն մի քանի օրինակներ են, սակայն այս խնդիրը ներգործում է աշխարհի յուրաքանչյուր երկրի վրա:

Ինչո՞ւ պետք է մտահոգվեմ անհավասարության խնդրով, եթե ես չեմ բախվում որևէ խտրականության

Ներկայիս աշխարհում բոլորս փոխկապված ենք: Խնդիրները և մարտահրավերները՝ լինեն դրանք աղքատություն, կլիմայի փոփոխություն, արտագաղթ կամ տնտեսական ճգնաժամ, երբեք չեն հասցեագրվում միայն մեկ երկրի կամ տարածաշրջանի:

Նույնիսկ ամենահարուստ երկրները դեռևս ունեն ծայրահեղ աղքատության մեջ ապրող համայնքներ: Հնագույն ժողովրդավարությունները դեռ պայքարում են ռասիզմի, հոմոֆոբիայի ու տրանսֆոբիայի և կրոնական անհանդուրժողականության դեմ: ՅՈՒՆԻՍԵֆ-ի վերջին զեկույցը նշում է, որ մի շարք բարձր եկամուտ ունեցող երկրներում աճում է անհավասարությունը երեխաների շրջանում:

Համընդհանուր անհավասարությունը ներգործում է բոլորիս վրա՝ անկախ մեր ինքնությունից և ծագումից:

Իրականում կարո՞ղ ենք հասնել բոլորի համար հավասարության այս աշխարհում

Հնարավոր է և պետք է ապահովել արժանապատիվ կյանք բոլորի համար: Անհրաժեշտ է, որ քաղաքական, տնտեսական և սոցիալական քաղաքականությունները լինեն համընդհանուր և հատուկ ուշադրություն դարձնեն խոցելի ու մեկուսացած համայնքների կարիքներին:

Վերջին վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ դա հնարավոր է: 2007-2012 թթ. ավելի քան 50 երկրում, մասնավորապես՝ Լատինական Ամերիկայում ու Կարիբներում և Ասիայում, որոշ ամենաաղքատ ընտանիքների միջին եկամուտը աճել է ավելի արագ, քան ազգային միջին եկամուտը՝ այդ երկրներում կրճատելով եկամտային անհավասարությունը:

Ի՞նչ կարող ենք անել

Անհավասարության կրճատումը պահանջում է շրջադարձային փոփոխություն: Անհրաժեշտ են ավելի մեծ ջանքեր՝ վերացնելու ծայրահեղ աղքատությունն ու սովը, և հարկ է ավելի շատ ներդրումներ կատարել առողջապահության, կրթության, սոցիալական պաշտպանության ոլորտներում ու արժանապատիվ աշխատանքի ապահովման հարցում՝ հատկապես երիտասարդների, միգրանտների և այլ խոցելի խմբերի համար:

Կարևոր է երկրների ներսում գորացնել և խթանել ներառական սոցիալական և տնտեսական աճը: Մենք կարող ենք ապահովել հավասար հնարավորություններ և կրճատել եկամտային անհավասարությունը, եթե վերացնենք խտրական օրենքները, քաղաքականություններն ու գործելակերպերը:

Ինչ վերաբերում է երկրների միջև անհավասարությանը, կարևոր է ապահովել, որ զարգացող երկրներն ավելի լավ ներկայացված լինեն համաշխարհային հիմնախնդիրների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում, որպեսզի լուծումները լինեն ավելի արդյունավետ, վստահելի և հաշվետու:

Կառավարությունները և շահագրգիռ կողմերը կարող են այդ թվում նաև նախագծված և լավ կառավարվող քաղաքականությունների միջոցով խթանել անվտանգ, կանոնավոր ու պատասխանատու միգրացիան միլիոնավոր այն մարդկանց համար, որոնք, ձգտելով ավելի լավ կյանքի, լքել են իրենց տները պատերազմի, խտրականության, աղքատության, հնարավորությունների բացակայության և այլ պատճառներով:

Կայուն զարգացման նպատակների և 10-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>